# ՄՈՍԿՎԱՅԻ ԿՐԵՄԼԻ ԶԻՆԱՊԱԼԱՏԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժինը վերջին տասնամյակում լայն հավաքչական աշխատանքներ է ծավալել Ռուսաստանի, Ուկրաինայի և Մոլդավիայի հայկական նախկին գաղթօջախների տարածքում։ Հավաքած ավելի քան 1000 արձանագրությունները գիտական մշակման ենթարկվելուց հետո կհրապարակվեն «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հերթական պրակներից մեկում։*

*1976 թ. վիմագրագիտական արշավախմբին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալու Մոսկվայի Կրեմլի Զինապալատի ֆոնդերում պահվող հայերեն գրություն ունեցող իրերին, որոնք զետեղված էին «Վրացական իրերի» բաժնում։ Սակայն ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ բաժնի 26 իրերից 20-ի արձանագրությունները հայերեն են։ Հայերեն արձանագրությունները փորագրված են թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով ընդելուզված արծաթյա խաչերի, սկիհների, քշոցների, մասնատուփերի և եկեղեցական այլ իրերի վրա, որոնք նվիրաբերված են Հաշտարխանի (Աստրախանի), Ղզլարի, Կաֆայի (Թեոդոսիայի), Ղարասուի (Բելոգորսկի), Գեոզլևի (Եվպատորիայի), Նոր Նախիջևանի և այլ գաղթավայրերի հայոց վանքերին ու եկեղեցիներին։*

*Արձանագրությունները թեև իրենց բնույթով հիշատակագրային են և թվագրվում են հիմնականում XVII—XVIII դդ., այնուամենայնիվ, կարևոր արժեք են ներկայացնում հայկական գաղթօջախների պատմության համար։ Դրանցում հիշատակվում են տարբեր դասերի ու խավերի ներկայացուցիչներ (հոգևորականներ, առևտրականներ, պաշտոնատար անձինք)։ Այստեղ հետաքրքրական վկայություններ են պահպանված հայոց անձնանունների փոփոխման, լեզվաոճական իրակությունների վերաբերյալ։*

*Ստորև, ըստ Զինապալատի գույքահամարների, հաջորդաբար տալիս ենք արձանագրությունների վերծանությունները՝ իրենց գրչագրերով հանդերձ։*

*№ 2646. Սկիհ արծաթյա, ոսկեզօծված, վերին շուրթի եզրերին կա հետևյալ արձանագրությունը.*

ՅԻ[Ի]Շ[Ա]Տ[ԱԿ] Է ՍԿԻՀՍ ՃԷՄԱ ԺՈՂՈՎՐԹԵԱՆ[1] ՕՋՈՒԻ[2] [Ի] ԴՈՒՌՆ

ՍԲ ԳԷՈՐԳԻՆ. ԹՎ[Ի]Ն ՌՃՂԳ. ԻՆ. (1774) *(տախտակ 1, նկ. I)։*

*№ 2647. Անոթ արծաթյա, ոսկեզօծված, 13,5 սմ տրամագծով։ Արտաքին մակերեսին պատկերված է գառ, որի աջ կճղակի մեջ խաչակիր դրոշակ է, վրան.*

Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս *(տախտակ 1, նկ. II)։*

*№ 18606. Սկիհ արծաթյա, ոսկեզօծված, գեղեցիկ զարդանախշերով։ Պատվանդանին շրջանաձև արձանագրված է.*

---

*1 Խոսքը վերաբերում է պարսկահայերին։*

*2 Օզու բնակավայրի ստույգ տեղադրությունը մեզ անհայտ է։ Այն հիշատակված է նաև «Մանր ժամանակագրություններում» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, հ. I, Երևան, 1951, էջ 232)։ «Հայկազեան բառարանում» կա այս բառի հետևյալ բացատրությունը. «Օզու սույս—Նիեփեր գետ—Բորիսթենէ» («Հայկազեան բառարան», հ. Բ, Վենետիկ, 1769, էջ 690)։*

***ՅԻՇԱՏԱԿ Է ԱՆԴՐԻԱՍԻ ՈՐԴԻ ԲԱԴԱՍԱՐԻՆ. ԵՒ ՈՒՐ ԿԵՆԱԿԻՑ ԵՂԻՍԱՊԵՏԻՆ Ի ԴՈՒՌՆ ՂՁԼԱՐՈՒ ՍՈՒՐԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՆ ՀՈԳՈՒՆԱԿՈՒԹ[ԵԱՄ]Բ ՍՐԲ[Ա]ՋԱՆ ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՐՂՈՒԹԷՆՑ. 1784 (տախտակ 1, նկ. III)։***




***№ 18716. Սկիհ արծաթյա, ոսկեզօծված, զարդանախշերով, բարձրությունը՝ 25 սմ, ներքին եզրերի շուրջը գրված է՝***

***ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ՍԻԿԻՍ ՀԱՇԴԱՐԽԱՆՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԹՎԻՆ ՌԷՃԽԴ. (1744) ՅՈԿՏԵՄԲԵՐ[3] (տախտակ 1, նկ. IV)։***

[3] Թվականը գրված է՝ 1000+7+100+44=1744։

*№ 18718. Խաչ արծաթյա, ոսկեզօծված. կոթառին՝ ձուլածո տառերով.*

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉՍ ԳՐԻԳՈՐԻ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՆԴՈՒԽՏԻՆ, ՈՐ ԵՏ ՀԱՇՏլԱյՐԽԱՆԱ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՈՂՈՍԻ ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԱՆՈՒԱՄԲ ԿԱՐՈՒՑԵԱԼ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ 1774 (*տախտակ 2, նկ. V*)։

ՏԱԽՏԱԿ 2




*№ 18719. Խաչ արծաթյա, ոսկեզօծ, ընդելուզված թանկարժեք քարերով. կոթառին՝ ոլորաձև.*

ՅԻՇԱՏԱԿ Է ԹՈՒՖԻՋԵՑԻ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՈՐԴԻ ՈՂՈՐՄԱԾ ՀՈԳԻ ՄԱՄԱՋԱՆԻՆ. ԱՅՍ ԽԱՉՍ ՀԱՇՏԱՐԽԱՆՈՒ ՔԱՐԷ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԴՈՒՌԸՆ ՄԱՐԻԱՄ ԱյՍՏՈՒԱյԾԱԾՆՈՒ ԳՐՎԵՑԱՒ[4] ԹՎԻՆ 1742 ՀՈՔԴԵՄԲԵՐԻ 6 ՈՒՄՆ (*տախտակ 2, նկ. VI*)։

---

[4] Կարելի է նաև՝ վերծանել՝ գրվեցաւ։

№ 18877. Խաչ արծաթյա, ոսկեզօծված։ Մի կողմին պատկերված են Քրիստոսի խաչելությունը և հրեշտակներ։ Քրիստոսի գլխավերևում գրված է՝

ՅՆԹՀ(Յ[Ի]ՍՈՒՍ] Ն[ԱԶՈՎՐԵՑԻ] Թ[ԱԳԱՒՈՐ] Հ[ՐԷԻՑ])[5]։ Մյուս երեսին-

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ՍԲ ԽԱՉՍ. ԿԵՕՋԼՈՎՑԻ Տ[Ի]Ր[Ա]Ց[ՈՒ] ՅԱՐՈՒԹՒՆԻ ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ԳՒԱԹԱՑԻՆ Մ[Ա]ՀՏ[ԵՍ]Ի ՓԱՆՈՍԻՆ ԵՒ. ԱՅԼ ՆՆՋԵՑԵԼՈՑՆ Ի ՆՈՐԱՇԷՆ Ք[Ա]Ղ[Ա]ՔՍ ՆԱԽՋԵՎԱՆ Ի Դ[ՈՒ]ՌՆ ՍԲ ՆԻԿՈՂԱՑՈՍԻՆ Թ[Վ]Ի[Ն]ՌԲՃԼԱ (1782)[6] (տախտակ 2, նկ. VII)։

№ 18878. Խաչ արծաթյա, ոսկեզօծված. մի կողմին խաչելության պատկերն է, վերևում՝ ՅՆԹՀ (Յ[ԻՍՈՒՍ] Ն[ԱԶՈՎՐԵՑԻ] Թ[ԱԳԱՒՈՐ] Հ[ՐԷԻՑ]) արձանագրությունը։ Հակառակ կողմին.

ԲԱՐԵԽՕՍ Է ՍԲ ՆՇԱՆՍ Մ[Ա]ՀԴ[Ե]ՍԻ ՅՈՀԱՆՆԻՍԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ՍԷՖԷՐ ՊԻԱՅԻՆ ԾՆ[Ո]Ղ[Ա]ՑՆ ԽԱՉԳՌՈՒՋԻՆ[7] ԵՒ ՇԱՀՆՈՒՐԻՒՆ ՈՐԴԻՈՅՆ ԷՂԻԵ[Ց]ԻՆ ԴՍՏԵՐՆ ԵԱՂՈՒԹ ՊԻՔԱՅԻՆ. Ի ԴՌՒՌՆ ՍԲ ՅԱՐՈՒԹԵ[Ա]Ն[Ի]։ Թվ[Ի]Ն[Ի] ՌՃԼԱ (1682) (տախտակ 2, նկ. VIII)։

№ 18879. Խաչ արծաթյա, ոսկեզօծված, համեմատաբար մեծ չափսերի։ Գնդաձև պատվանդանին՝ ՍԱ Է Թ[Ա]Գ[Ա]Ւ[Ո]Ր Հ[Ր]ԷԻ[Ց].

Խաչթևերին՝

ԿԱԶՄԵՑԱՒ ՍԲ ՆՇԱՆՍ՝ ԱՐԴԵԱՄԲ[Ք] ՅԱՐՈՒԹԵ[Ա]Ն[Ի] ՀԱՒԱՍԱՐ Ժ[Ո]Ղ[Ո]ՎՐԴԵԱՆՆ՝ ԵՒ ԵԴԱՒ Ի ՍԲ ՅԱՐՈՒԹՕ[Ա]Ն[Ի] ՏԱՃԱՐԻՍ ԹՎԻՆ ՌՃԺ (1661) (տախտակ 3, նկ. IX)։

№ 18880. Խաչ արծաթյա, ոսկեզօծված (ճզմված)։ Մի երեսին՝ խաչելության պատկերից վեր ագուցված թիթեղին, սրբապատկերներ են և՝ ՅՆԹՀ։ Մյուս երեսին շրջանաձև մեդալիոնների մեջ ձուլածո տառերով արձանագրված է.

ԲԱՐԵԽԱՒՍ Է ՍԲ ՆՇԱՆՍ Խ[Ո]Յ[Ա]Ճ[Ա]Յ ԹԱՒԽՏԱՄԻՇԻՆ ՀՈԳ[Ո]ՅՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ՈՒԼՈՒՊԻՔԱՅԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ. ԴԷՄԻՐԻՆ. ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԱԼԹՆԻՆ, ԵՂԲԱՒՐՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ. ՈՐ ՏՂԱ ՀԱՍԱԿԱՒ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ ԵՒ ՋԱՒ[Ա]Կ[Ա]ՑՆ ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ՄԱՆԿԱՆՑՆ ՄԱՐՏԻՐ[Ո]ՍԻՆ ԵՒ ՅԵՍԱՅԻՑՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՆ ԱՌ ՔՍ՝ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ ՅԻՇԱՏԱԿ Է Ի ԴՌՒՌՆ ՍԲ ԳԷՈՐԳԱՅ ԹՈՒԻՆ ՌՃԺԹ (1670) (տախտակ 3, նկ. X)։

---

5 Խաչերի հակառակ երեսների հապավված արձանագրությունները տալիս ենք հիմնական արձանագրությունների գրչագրերի հետ՝ վերևի մասում։

6 Թվագրված է՝ 1000+2+100+31=1231+551=1782։

7 Արձանագրության մեջ հիշատակված Խաչգռուզը, ամենայն հավանականությամբ, XVII դ. ականավոր բանաստեղծ, տաղերգու Խաչատուր Կաֆայեցին է (ծնված 1592 թ., տե՛ս Ա. Ս. Մնացականյան, Դարձյալ Մատենադարանի № 7709 ձեռագրի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 1, էջ 76), որի մասին առաջին անգամ աշխատություն է հրապարակել Աշ. Աբրահամյանը («Էջմիածին», 1944, № 1, էջ 39—51)։ Խաչգռուզը Խաչատուր Կաֆայեցու աշխարհական անունն է։ Վ. Հակոբյանի կարծիքով, Խաչգռուզը մահացել է 1659 թ. սկզբներին, քանի որ նա իր տարեգրությունը ժամանակագրել է մինչև 1658 թ. («Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հ. 1, էջ 205)։ Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ա. Ս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956։

4-րդ տախտակի XV արձանագրության մեջ նույնպես հիշատակվում են Խաչգռուզն ու նրա կին Շահնուրին (1732 թ.)։

№ 18881. Խաչ արծաթյա, փոքր չափսի։ Խաչթևերին՝ հրեշտակապետների, իսկ կենտրոնում՝ խաչելության պատկերներ են, որոնց վերևում ագուցված արծաթյա թիթեղիկի վրա՝ ՅԱՆՁԹԳՀՐ (Յ[ԻՍՈԻ]Ս Ն[Ա]Ձ[ՈՎՐԵՑԻ] Թ[Ա]Գ[ԱԻՈՐ] ՀՐ[ԷԻՑ])։ Հակառակ երեսին.

ՅԻՇԱՏԱԿ Է Ս̅Բ̅ ՆՇԱՆՍ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ԺՈՂՈՎՐԴԻԱՆՆ՝ ԽՈԺԱՅԻՆ՝ ԿԱԿՈՍԻՆ՝ ՍԻՄԷՈՆԻՆ՝ ԽՈԺԱ ՅՈՎԱՆԻՍԻՆ՝ ՍՈԻԼԹԱՆԻՆ՝ ՏԷՐ ԱՆՏՈՆԻՆ՝ ԱԻԵՏԻՔԻՆ, ՎԱՐԴԱՆԻՆ՝ ՅՈՎԱՆ[Ն]ԻՍԻՆ՝ ՂԱՋԱՐԻՆ՝ Ի ԴՐՈՒՆՍ Ս̅Բ̅ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ ԹՎԻՆ ՌՃԾ (1701) (տախտակ 3, նկ. XI)։




№ 19374. Բուրվառ արծաթյա, նախշազարդ, շուրջը հետևյալ արձանագրությամբ.

ՅԻ⌊Ի⌋ՇԱ⌊ՏԱ⌋Կ Է ՔԷՖԷԻ ՄԱՔՍԱՊԵՏ ԹԱ⌊Ի⌋Ր⌊Ա⌋Ս ԻԻԱՆԻՋԻ ԿՆՈՋ. ՄԷԼԻՆԱՑ ԻԻԱՆՈՎՈՅԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԽԱՉ ՎԱՆԻՑՆ ՂՐԻՄՈԻ ՌՄԿԷ 1818[8]. (տախտակ 3, նկ. XII)։

№ 19627. Սափոր արծաթյա, ոսկեզօծված. բերանի բացվածքի տրամագիծը 16 սմ: Քրիստոսի խաչելության պատկերից վերև՝ ՅՆԹՀ.

Յ⌊ԻՍՈՒՍ⌋ Ն⌊ԱԶՈՎՐԵՑԻ⌋ Թ⌊ԱԳԱՒՈՐ⌋ Հ⌊ՐԷԻՑ⌋ (տախտակ 4, նկ. XIII)։




№ 19659. Քշոց արծաթյա, բուսական զարդերով. մի կողմին.

8 Ունի կրկնակի թվագրություն, որոնցից առաջինը արաբատառ է։

*ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉՍ ԱՍՎԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԷՆԻ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱյՍՏՈՒԱյԾԱԾՆԻ ՈՐ Է ՂԱՐԱՍՈՒՆ[9] ՅԱՄԻ ՏլԵԱՌյՆ 1780. ՆՈԵՆԲԵՐԻ ՄԷԿ ՌՄՃԼԹ (1790)[10] (տախտակ 4, նկ. XIV)։*

*№ 19703. Խաչ արծաթյա, ոսկեզօծված։ Մի կողմին՝ Քրիստոսի խաչելության պատկերը, գլխավերևում՝ ՅՆԹՀ, մյուսին՝ մանրատառ.*

*ԲԱՐԵԽՕՍ Է ՍԲ ՆՇԱՆՍ ՕՎԱՆԷՍԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԽԱՉԿՈՒՌՈՒՋԻՆ ՆԷՖԷՐ ՊԻՔԱՅԻՆ ՈՐԴԻԳՆ ԽԱՉԿՌՈՒՋ ԼՈՒՍՊԱՐՈՆ ՄԵՐԿԵԱՆ[11] ԻՇԱՏԱԿ Է Ի ԴՈՒՌՆ ՍԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ. ԹՎԻՆ ՌՃՁԱ ԻՆ (1732) (տախտակ 4, նկ. XV)։*

*№ 19707. Քշոց արծաթյա. մի կողմին՝ խաչելության տեսարանը, վերևում՝ ՅՆԹՀ։ Հակառակ կողմին.*

*ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ՆՇԱՆՍ ՄԱՀԴԵՍԻ ՏՕլՎԱԹ ՊԻՔԱՅԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ՋԱՒԱԿԱՑՆ ՄԻԱՍԱՐԻՆ ԵՒ ԽԱՆԻ ՊԻՔԱՅԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԹՎլԻՆյ ՌՃԺԲ (1663) (տախտակ 4, նկ. XVI)։*

*№ 19708. Քշոց արծաթյա, ոսկեզօծված։ Մեկ երեսին՝ խաչելության տեսարանը, Քրիստոսի գլխավերևում՝ Յ Ն Թ Հ, մյուսին՝ կենտրոնական խաչթևերին.*

*ԲԱՐԵԽՕՍ Է ՍԲ ՆՇԱՆՍ ՍլՈյԻլԹԱՆ ՊՒԷԻՆ ԱՌՆ ԽլՈյՃլԱյՑ ՇԵՀՐԻՒՆ՝ ԴՍՏԵՐՆ ՏՕլՎԷԹ ՊԻՔԷԻՆ ԵՒ ՓԵՍԻՆ՝ ՊԱՐՈՆ ՄԻԵՍԷՐԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԹՎԻՆ ՌՃԽԸ ԻՆ (1699) (տախտակ 5, նկ. XVII)։*

*№ 19712։ Խաչ արծաթյա, ոսկեզօծված, ոչ մեծ չափսի. առաջին երեսին՝ ՅՆԹՀ, խաչթևերին՝*

*ՅլԻյՇլԱՏԱյԿ Է ՍԲ ԽԱՉԸՍ ԱՃԱՄ[12] ԴԱՒԹԱԻՆ ՀՈԳՈՅՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԹՎԻՆ ՌԲՃԷ (1758)[13] (տախտակ 5, նկ. XVIII)։*

*№ 19715. Խաչ արծաթյա, ոսկեզօծված, ոչ մեծ չափսի։ Խաչելության պատկերից վեր ամրացված է արծաթյա ռոմբաձև թիթեղ, վրան փորագրված՝ ՏԷՐ։ Հակառակ երեսին՝*

---

*[9] Ղարասու կամ Ղարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ, Ղրիմի մարզ)։*

*[10] ՌՄԻԹ-ի փոխարեն սխալմամբ թվագրված է ՌՄՃԼԹ, այսինքն՝ 1000+200+160+39+551=1790։ Թերևս Ի-ի տեղ փորագրված է Լ (30) և ստացվել է 1790։*

*[11] Խաչգռուզ բանաստեղծի թոռ Լուսպարոն Մերկյանը Ղրիմահայ գաղութի ականավոր գործիչներից մեկն էր։ Նրա անմիջական մասնակցությամբ ու «վերակացութեամբ» կառուցվել և վերանորոգվել են Թեոդոսիայի մի շարք եկեղեցիներ ու մատուռներ։ Նեցուկ ունենալով ղրիմահայոց հոգևոր առաջնորդ տեր-Սիմեոնին, ճարտարապետներ Սարգսի և Մինասի ղեկավարությամբ նա վերանորոգել տվեց տեղի ս. Գևորգ եկեղեցին (այժմ՝ վերանորոգված), ս. Սարգիս մայր տաճարի դուռը և այլն (տե՛ս Մ ի ն ա ս Բ ժ շ կ ե ա ն, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 350—352, հմմտ.* Х. Кучук-Иоаннесов, Старинные армянские надписи и старинные армянские рукописи в пределах юго-западной Руси и в Крыму, М., 1892, с. 36).

*[12] Ա ճ ա մ (աջամ) արաբներն սկզբնապես անվանում էին պարսիկներին, սակայն ավելի ուշ շրջանում «և արաբները, և թուրքերը, և քրդերը «աջամ» էին կոչում ոչ միայն պարսիկներին, այլև նրանց դավանակից (շիա) ադրբեջանցիներին» (տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Կալվածագրեր», պր. I (ԺԴ—ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, էջ 185)։*

*[13] ՌՄԷ-ի (1207-ի) փոխարեն թվագրված է ՌԲՃԷ (1000+200+7+551=1758)։*

*ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉԸՍ ԷՐԷՄԻԱԻ ՈՐԴԻ ԱԲՐԼԱՅՀԱՄԻՆ ՀԼՈԳՈՒՆ Ի ԴՈՒՌՅՆ ՍԲ ՕԳՍԵՏՆԻ ՈՒՍԷՆՏԻՆ (°)[14] ԹՎԼԻՆՅ ԳՈՒԼԵՑԱԻՆ? ՌԲՃԷ (1758)[15] (տախտակ 5, նկ. XIX)։*




*№ 19716. Խաչ արծաթյա, ոսկեզօծված։ Մի կողմին խաչելության պատկերն է, մյուսին՝*

---

14 Օգսետնի ուսէնտին կապակցության վերծանությունը թեական է։ Առաջին բառում նկատելի է գրափոխության երևույթը՝ օգսենտի-օգսետնի, իսկ երկրորդը, թերևս, նույն բառի բարբառային արտասանությունն է՝ անհարկի կրկնված։

15 Տե՛ս № 18718 արձանագրության տախտակի ծանոթագրությունը։

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉՍ ՏԻՐԱՑՈՒ ՇԱՀԻՆԻՆ ՀՈԳՈՑՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ ԳՈՒՀԱՐԻՆ ԵՒ ՈՐԴՈՅՆ ՍԻՄԷՈՆԻՆ՝ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԹՎԻՆ ՌՃՁ (1731) (տախտակ 5, նկ. XX)։

№ 19717. Խաչ արծաթյա, ոսկեզրած՝ խաչելության տեսարանից վեր՝

ԹԱՀ ՅՈՆ (ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ ՅԻՍՈՒՍ ՆԱՋՈՒՐԵՑԻ?)։

Մյուս կողմին՝ 14 տողով.

ԲԱՐԵԽՈՍ Է ՍԲ ՆՇԱՆՍ ՊԱՐՍԱՄԻՆ ՀՈԳՈՅԻՆ ԵՒ ՄԱՐԻԱՄԻՆ ԵՒ ԼՈՒՍՊԻՔԱՅԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ ԹՎԻՆ ՌՃԿԸ (1719) (տախտակ 5, նկ. XXI)։

Զինապալատի հայերեն արձանագրությունները, անշուշտ, ներկայացնում են պատմագիտական կարևոր արժեք հայ և ռուս ժողովուրդների կապերն ուսումնասիրելու բնագավառում։

## АРМЯНСКИЕ НАДПИСИ ОРУЖЕЙНОЙ ПАЛАТЫ МОСКОВСКОГО КРЕМЛЯ

ГРИГОР ГРИГОРЯН

### Резюме

Эпиграфическая экспедиция Института археологии и этнографии АН Армянской ССР в период экспедиционно-полевых работ в 1976 г. ознакомилась с армянскими надписями предметов из фондов Оружейной палаты Московского Кремля. Выяснилось, что 20 предметов из 26, хранящихся в «Грузинском отделе» (серебряные и позолоченные кресты, рипиды, потиры и т. д.), имеют армянские надписи, датированные XVII—XVIII вв. Дешифровка показала, что предметы эти — культового назначения и изготовлены в бывших армянских колониях России — Астрахани, Кизляре, Кафе (Феодосия), Карасу (Белогорск, Крым), Геозлеве (Евпатория) и др. В надписях упоминаются представители разных классов и сословий (священнослужители, купцы, чиновники), отражены местные специфические наречия армянских переселенцев.

Армянские надписи Оружейной палаты, бесспорно, представляют определенную ценность в изучении исторических связей русского и армянского народов.